ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ԲԱՂՄԱՆ ԾԵՍՆ ԱՂՁՆԻՔՈՒՄ XIX Դ. ՎԵՐՋԻՆ - XX Դ. ՍԿԶԲԻՆ

1. Ընտանեկան ծիսական համակարգում ուրույն տեղ ուն Թաղման ծեսը: Այն աչքի է ընկնում հնավուրդ սովորությունների խիստ պահպանողականությամբ և բովանդակում է ժողովրդի կենսակերպի ու պատկարացումների առավել հատկանշական գծեր, ուստի Թաղման ծիսակարգի գիտական մեկնաբանումը կարող է նպաստել մշակութային այլազան շերտերի բացահայտմանը տվյալ էթնիկ ավանդությում:

2. Աղձնիքահայոց Թաղման ծեսերին վերաբերող նյութերը, բաղված ազգագրական գրավոր և դաշտային աղբյուրներից, հնարավորություն են ընձեռում որոշակիորեն առանձնացնելու մահամերձի /հոգևարը պարողի/ նկատմամբ ժողովրդի վերաբերմունքի, մահը կանխագուշակելու ռացիոնալ ու իռացիոնալ հնարների, հանգուցյալի մարմնի հետ վարվելու /լողացնելու, պատանքելու/, դիակը հուղարկավորելու /եկեղեցի ու գերեզմանոց տանելու, գերեզման իջեցնելու/, հոգեհացի կարգը կատարելու, ինչպես նաև վախճանը ողբալու և սգալու բազմատարր արարողությունների ու սովորությունների հետևողական շղթան:

3. Ինչպես ցույց է տալիս նյութերի քննությունը, այդ ամենի կատարումը մեծապես պայմանավորված է եղել հանգուցյալի դիրքով ու մահվան բնույթով, հիմքում ունենալով էթնո-մշակութային ավանդությը: Այսպես, սովորականի նման չէին Թաղում ինքնասպանություն գործած, անհաղորդ, հատկապես կայծակնահար եղած մարդկանց: Ողբի, սուգուշիվանի աստիճանն էլ պայմանավորված էր հանգուցյալի ,,Թանկ մեռել,, կամ ,,էժան մեռել,, լինելով: Առանց լաց ու կոծի, մեծ արժանապատվությամբ ու հպարտության զգացումով էր կատարվում կռվի դաշտում զոհվածի Թաղումը: Որոշակի տարբերություններ է նկատվում նաև դեռահաս, կին կամ տղամարդ մեռյալների Թաղման կարգի միջև:

4. Աղձնիքցիների Թաղման ծեսն աչքի է ընկել յուրօրինակ մի սովորության առկայությամբ՝ դա հուղարկավորմանը ձիուն մասնակից դարձնելն է և կանանց մասնակցության հարցը: Այս երկու մոտիվի համադրումն ու համեմատական վերլուծությունը ի հայտ է բերում հետևյալ հիմնական պատերը. ա/ կանայք ոչ Թե չեն մասնակցել Թաղմանն առհասարակ, այլ չեն մասնակցել տղամարդ ննջեցյալի Թաղմանը, ընդ որում, այդ չմասնակցելը ևս պայմանական է՝ նրանք Թաղման ժամանակ պարզապես չեն հասել գերեզմանոց, մեռյալի շիրիմին այցելել են հաջորդ օրը, բ/ տղամարդու Թաղմանը մասնակից է դարձվել նաև նրա ձին, բայց դա էլ միշտ չէ, որ մինչև վերջ է արվել՝ հաճախ ձին ետ է

դարձվել կես ճանապարհից /եկեղեցու բակից/, գ/ մինչև գերեզմանոց հասնելու ճանապարհի հաջորդ կեսը սգո թափորին առաջնորդել է հեծյալների խումբը՝ ձիախաղով /ջիրիտ/ ու հրացանաձգությամբ, դ/ ննջեցյալի հետ հաճախ թաղել են նրա սիրած իրը, երբեմն նաև՝ կնոջ հյուսքեն ծամը:

Այս ամենը, ըստ երևույթին, թաղման ծեսի հնավուրց այն սովորույթի արձագանքն է, երբ հանգուցյալի հետ գերեզման են իջեցվել նրա անձնական իրերը, այդ թվում նաև կնոջն ու ձին, մի երևույթ, որ լավագույնս վկայում է հայոց էթնիկ մշակույթի մեջ ժառանգորդման հզոր մեխանիզմի գործելը:

5. XIX դ. վերջին -XXդ. սկզբին Աղձնիքում կենցաղավարած թաղման արարողությունը ընդհանուր գծերով հույժ հարազատ էր Հայաստանի այլ պատմա-ազգագրական շրջանների համանման սովորույթին: Սակայն, ինչպես ցույց են տալիս նյութերը, ծեսի առանձին մանրամասներ ընորոշ են եղել միայն ուսումնասիրված շրջանին: Երբեմն էլ, աղձնիքյան տարբերակի ինչ-ինչ տարրեր որոշ զուգահեռներ ունեն ուրիշ ժողովուրդների նույնատիպ սովորույթների մեջ:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԳԵՏԱՅԻՆ ՁԿՆՈՐՍՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՍԵՎԱՆԻ ԵՎ ԿԱՄՈՅԻ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

1. Գրավոր և մեր իսկ հավաքած դաշտային նյութերը վկայում են ոչ վաղ անցյալում Սևանի ավազանի ձկնաշխարհի բավական առատ լինելը: Ըստ ավանդության, երբ առաջին վերաբնակիչները XIX դ. 30-ական թվականների սկզբներին եկել են Սևանի ավազան և սայլերով անցել գետերը, ձուկն այնքան առատ է եղել, որ ջուրը կարմրել է սայլի անիվների տակ: Ջրի ալիքներն ափ են նետել ձկան կույտեր, գետից ջուր վերցրնելիս ձկները լցվել են դույլի ու կժի մեջ, գետից ձուկ են վերցրել մաղով ու սալայով, գետում բուրդ լվանալիս ձկներն ընկել են ըրդի մեջ, արտերը ջրելիս վխտացել մարգերում:

2. XIX դ. 30-ական թթ. մինչև մեր դ. 50-ական թթ. կիրառվել են գետային ձկնորսության ժողովրդական մի շարք եղանակներ, այսինքն՝ ձուկ են բռնել հետևյալ կերպ. ա/ <u>չանգալով</u>. երկայնքը՝ 1-1,5մ,, ծայրին՝ կեռ, վայտե կոթունով: Գետում նկատելով խոշոր ձկների, խփել են չանգալով և դուրս հանել, բ/ <u>զոլայով</u>. երկայնքը՝ 3-4 մ.,